

## ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Շուրջ կես դար ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ է կապել իր կյանքը անվանի գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր Վլադիմիր Աղասու Կիրակոսյանը:

Ծվել է 1936 թ. մայիսի 20-ին Լենինականում: 1944-1954թթ. սովորել է տեղի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում:

1954-59 թթ. սովորել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնում, ավարտելուց հետո աշխատել Ապարանի շրջանի դպրոցներում (1959-1962 թթ.):

Դրսևորելով գիտահետազոտական աշխատանքի հակումներ՝ 1962 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրա: 1966 թվականից աշխատում է Գրականության ինստիտուտում: 1994-2009 թթ. եղել է ինստիտուտի փոխտնօրենը՝ ցուցաբերելով գիտակազմակերպչական հմուտ ձիրք:

Գիտական գործունեության սկզբում ձեռնամուխ է եղել Ռուբեն Սևակի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը, որի արդյունքում 1972 թ. լույս է տեսել «Ռուբեն Սևակ. (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրությունը, ապա քննախոյզ վերլուծության է ենթարկել 20-րդ դարասկզբի արևմտահայ պոեզիայի առանցքային խնդիրները, հանդես եկել նորովի մեկնաբանություններով:

1985 թ. հրատարակվել է գրականագետի «Արևմտահայ բանաստեղծությունը (1890-1907 թթ.)» գիրքը:

Բացի մենագրություններից, ունի բազում հրապարակումներ կոլեկտիվ աշխատություններում և ժողովածուներում:

Վլադիմիր Կիրակոսյան գրականագետին բնորոշ է ժամանակի տարբեր երևույթները փոխկապակցված տեսնելու կարողությունը, յուրաքանչյուր հեղինակի գրական ժառանգությունն իբրև ամբողջական շղթայի յուրահատուկ օղակ դիտարկելը:

Գեղագետի խորը և նուրբ դիտողականությամբ է Վլադիմիր Կիրակոսյանը թափանցում գեղարվեստական ստեղծագործության բովանդակության ու գեղագիտական ներգործության բազմաթիվ շերտերը, բացահայտում հեղինակների աշխարհայացքը, գեղարվեստական մտածողությունը, ոճը, դավանած գաղափարներն ու սկզբունքները, տվյալ ստեղծագործության հեղինակային մտահղացման խորքային իմաստները, պատկերային համակարգը:

Վլադիմիր Կիրակոսյանը մասնակցել է նաև դպրոցական դասագրքերի ստեղծման գործում: Նրա՝ պարզ և մատչելի ձևով շարադրված գրականության դասագրքերը կազմված են աշակերտների տարիքային խմբերի մտածական, զգայական, հոգեբանական յուրահատկություններին համապատասխան, նպաստում են գիտելիքների որոշակի պաշարով, գործնական ունակություններով ու հմտություններով, արժեքային համակարգով օժտված անհատներ ձևավորելուն:

Մանկավարժի բնատուր ձիրք ունեցող գիտնականի մեթոդական ձեռնարկները ուղենիշ են ուսուցչի համար՝ նոր հայեցակարգով ձիջտ կազմակերպելու թեմայի ուսուցումը, ուշադրությունը սևեռելու ուսուցվող նյութի խորքային ուսումնասիրությանը, գործնական աշխատանքներին:

Գրականության ինստիտուտում էլ Վլադիմիր Կիրակոսյանը ակտիվորեն մասնակցում է գիտակրթական կյանքին: Տասնամյակներ շարունակ նա իր իմացությունն է հաղորդում ասպիրանտներին և հայցորդներին՝ ղեկավարելով նրանց գիտական աշխատանքները, հոգածությամբ պատրաստելով նոր մասնագետներ:

Վլադիմիր Կիրակոսյանի մեջ միահյուսվել են Մարդը և գիտնականը: Գրականության ինստիտուտի Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրության խմբի ղեկավարն է: Հետևողական աշխատանքի շնորհիվ բաժնում մշտապես տիրում է ստեղծագործական մթնոլորտ: Խստապահանջ ղեկավարը բոլորի համար նաև ընկեր է, խորհրդատու: Խումբը զբաղված է «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության» կազմման աշխատանքներով: Լույս են տեսել առաջին և երկրորդ հատորները: Աշխատանքը կատարվում է նվիրումով և պատասխանատվությամբ:

Վլադիմիր Կիրակոսյանի գիտահետազոտական գործունեությունը մշտապես արժանացել է բարձր գնահատանքի:

Օրինակելի է նրա անհատական նկարագիրը ևս: Հեռու ծայրահեղություններին տուրք տալու գործելակերպից՝ մշտապես ցուցաբերել է լայնախոհություն, կանոնավոր ու վայելուչ պահվածք: Անկեղծության ու անմիջականության շնորհիվ վայելում է բոլորի հարգանքը:

Շնորհավորում ենք Վլադիմիր Կիրակոսյանին ծննդյան 80-ամյակի առթիվ: Մաղթում ենք, որ այսուհետ ևս երիտասարդական անհատնում եռանդով ու ավյունով շարունակի գիտական գործունեությունը և ավարտին հասցնի նվիրական ծրագրերի իրականացումը:

*Հերիքնազ Որսկանյան*

**ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱԼ**  
(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Վարազդատի Մուշեղյանի կյանքը մաքառումի ու նվիրումի բացառիկ օրինակ է:

Ճակատագրի դեմ շարունակ պայքարելու, ճակատագրին դիմագրավելու մարդկային անընկճելի կամք, ճակատագրին հաղթելու հավատ և ուժ, նաև հոգեկան հանգստություն՝ տանելու այն, ինչն այլևս անհնար էր փոխել իր կյանքում. ահա հատկանիշներ, որոնք նպաստել են Մուշեղյան անհատի հոգեկերտվածքի ձևավորմանը:

Օրերի շրջապտույտում ստիպված լինելով հաղթահարել բազում խոչընդոտներ ու արգելքներ, երբեմն թևաթափ հերթական փորձության հարվածից՝ չի տառապել հոգեբանական բարդույթներով, այլ մշակել է երևույթները տեսնելու և ընկալելու իր կերպը, աշխարհին նայելու իր հայեցակետը: Արդյունքում ցրել է հոգին ակոսող մութը և ճանապարհի հարթել ոչ միայն իր, այլև շատերի համար: Իրեն առաջնորդող լույսն էլ դարձել է բանաստեղծություն՝ թույլ չտալով, որ ամայանա հոգին, կամ երբեմն-երբեմն կուտակված դառնությունը վերածվի չարության կամ ասելության:

Ծնվել է 1931 թ. սեպտեմբերի 27-ին Երևանում: Վեց տարեկանում կորցրել է տեսողությունը, սակայն 1949 թ. դպրոցն ավարտել է ոսկե մեդալով: 1949-1954 թթ. սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բաժնում, ապա ավարտել նույն ֆակուլտետի ասպիրանտուրան՝ ավստրոգերմանական գրականության գծով, զբաղվել թարգմանական գործունեությամբ՝ այդ տարիներին ընթերցողի սեղանին դնելով Հայնրիխ Հայնեի «Գերմանիա» և «Չմեռային հեքիաթ» ստեղծագործությունները (1959 թ.), հետագայում՝ Հայնեից՝ «Բանաստեղծություններ և գեղուններ» (1983 թ.), Գյոթեից՝ «Վայմարյան քնար» (1985 թ.), «Բանաստեղծություններ» (1993 թ.) գրքերը, Արմին Թ. Վեգներից՝ «Ճանապարհի առանց տունդարձի» (2000 թ.) ստեղծագործությունը (համահեղինակ):

Մաքառումի իր ջիղը մղել է նրան 1956 թ. հիմնելու Բրայլյան տպարան, իրականացրել Բաֆֆու «Սամվելի», Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և այլ գրքերի տպագրությունները:

1965-1973 թթ. եղել է Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահը, լուծել բազում հիմնախնդիրներ, զա-

նազան հարցերով օգնել մարդկանց:

1973 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 1974 թ.՝ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտ, ուր աշխատում է մինչ օրս:

Նախատրամադիր ամենօրյա տքնաշան աշխատանքի՝ բացառիկ ընկալունակության, աշխատասիրության, հիշողության շնորհիվ Ալբերտ Մուշեղյանը տարիների ընթացքում կուտակել է գիտելիքների հսկայական պաշար և իբրև գիտնական՝ իր անգնահատելի վաստակը բերել հայագիտությանը:

Անընդգրկելի է նրա գիտական հետաքրքրությունների շառավիղը: Սկզբում զբաղվել է հայ նոր գրականության ուսումնասիրությամբ, 1980 թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Ավետիք Իսահակյանի կյանքի և ստեղծագործության վաղ շրջանը» (1889-1895 թթ.) թեմայով, ապա հայացքը հատել է հին գրականությանը: 1996 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ե դարի հայ մատենագրության ժանրային խնդիրները» թեմայով:

Ստեղծագործական, հետազոտական ճանապարհին նա հասել է մեծ նվաճումների՝ ձեռք բերելով գիտական հասարակության հարգանքը, պարգևատրվելով մեդալներով ու պատվոգրերով: Պարգևատրվել է Գրականության ինստիտուտի Մ. Արեղյանի անվան արծաթե հուշամեդալով, ԵՊՀ համալսարանի Ոսկե մեդալով, ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալով, ՀՀ Պաշտպանության նախարարության հուշամեդալով, ՀՀ Գիտության և կրթության նախարարության Ոսկե մեդալով, ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

1979 թ. Հայաստանի գրողների միության անդամ է, 2004 թ. Բնական ու հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ:

Ալբերտ Մուշեղյանը հեղինակ է շուրջ 100 ուսումնասիրությունների: Խորաթափանց, արթուն միտքը, բանասիրական բարձր պատրաստվածությունը, լեզուների իմացությունը, մաթեմատիկական տրամաբանությունը նրան թույլ են տվել բարդ, պրոբլեմային, ներքին հակասություններ ունեցող հարցադրումների լուծումները փնտրել ու տրամաբանված, ծանրակշիռ փաստարկումներ կատարել:

Գիտնականի յուրաքանչյուր հոդված կամ գիրք հատկորոշվում է ինքնատիպ, առանձնահատուկ մտածողությամբ, ձկուն տրամաբանությամբ: Մտքի աչքով կարողանում է տեսնել ուրիշների համար անտեսանելի և հաճախ մանրուք թվացող փաստի վրա կառուցել մի

ամբողջ տեսություն, կատարել ուշագրավ զուգադրումներ: Երբևէ չի վարանել քննադատելու պատմական փաստերը խեղաթյուրողներին, և ընդվզումը մշտապես ուղեկցվել է կաղապարված տեսակետները հերքելու, գիտական ճշմարտությունը ներկայացնելու խիզախությամբ:

Ալբերտ Մուշեղյանի գիտելիքները, կենսափորձն ու իմաստությունը նրա յուրաքանչյուր զրուցակցի, ասպիրանտի ու հայցորդի համար ակնհայտ հնարավորություն են՝ ուսանելի դասեր քաղելու:

Չարմանք է հարուցում, թե ինչպես կարող է մարդը այդպես փայլուն տիրապետել թե՛ գրականության, թե՛ պատմության վիթխարի ու բազմաբովանդակ նյութին, պատմական քարտեզագրության սկզբունքներին:

Ալբերտ Մուշեղյանը որքան ուժեղ ու ամուր է իբրև գիտնական, նույնքան զգայուն է հայրենիքի, ազգի ձակատագրի հանդեպ իր տազնապաներով: Տարիներ շարունակ հրապարակախոսական գործունեությամբ սատար է եղել Արցախյան շարժման մասնակիցներին և իր գրչով անզիջում պայքար մղել թուրք-ադրբեջանական կեղծարարների դեմ:

Ալբերտ Մուշեղյանին մաղթում ենք քաջառողջություն, ստեղծագործական երկարակեցություն, նորանոր հրապարակումներ:

Հերիքնազ Որսկանյան

## ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ – ԱՐԵՎՇԱՍՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Վաթսուհիինգ տարի գիտության աշխարհում. պատկառանք ու ակնածանք է ներշնչում Քնարիկ Տեր-Դավթյանի անմնացորդ նվիրումը գիտությանը:

Քնարիկ Տեր-Դավթյանը ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: 1934 թ. ընտանիքը տեղափոխվել է Հայաստան: 1945 թ. ավարտելով Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը՝ նա կրթությունը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ապա նույն ֆակուլտետի ասպիրանտուրայում: Գիտության հանդեպ հետաքրքրությունը նրան 1951 թվականից կապել է Մաշտոցի անվան

Մատենադարանին, իսկ 1972 թվականից՝ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտին:

Գիտական գործունեությունն սկսել է թարգմանական աշխատանքներով, որոնք նա կատարել է բժախնդրորեն՝ հարազատ մնալով բնագրերին:

1962 թ. ռուսերեն թարգմանությամբ տպագրվում է Շիրակացու «Տիեզերագիտությունը»: Մեկ տասնամյակ անց՝ 1973 թ., ռուսերեն լույս է տեսնում «Հայ սրբախոսական գրականության հուշարձանները» գիրքը, որը տքնաջան աշխատանքի արդյունք էր:

1975 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ վարքագրությունը 11-15-րդ դարերում» թեմայով: Ծարունակելով գիտահետազոտական աշխատանքները՝ 1995 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Քրիստոնեական գրականության զարգացման ուղիները Հայաստանում» թեմայով: Նույն թվականին հրատարակում է «Հայելի վարուց», «Армянские жития и мученичества» (V – XVII вв.) գրքերը: Վերջինիս հայերեն լրացված տարբերակը լույս է տեսնում 2011 թ.: Այն ընդգրկում է 200 վկայաբանություն և 30 վարք:

Պետք է նշել, որ Քնարիկ Տեր-Դավթյանն է առաջին անգամ քննության առարկա դարձել XII – XVIII դդ. հայ նահատակների մասին վկայաբանությունները, արժևորել սրբախոսությունը որպես գրական երևույթ միջնադարյան գրականության համակարգում: Այս ամենի հետ զբաղվել է ձեռագրագիտական, աղբյուրագիտական և պատմագիտական խնդիրներով, կազմել քննական բնագրեր, կատարել ծանոթագրումներ, ռուսերեն թարգմանություններ: Նմանատիպ աշխատանքները պահանջում են բազմամյա պրպտումներ, խորը պատրաստվածություն, նյութի բարեխիղճ ուսումնասիրություն, անհատում տքնանք: Հենց այդպես էլ՝ իրեն հատուկ ազնվությամբ, պատասխանատվության անչափելի զգացումով ու նախանձելի եռանդով է Քնարիկ Տեր-Դավթյանը ձեռնարկում յուրաքանչյուր աշխատանք, թափանցում գիտական տարբեր խնդիրների մեջ:

Քնարիկ Տեր-Դավթյանն ապրում է իր ստեղծած յուրաքանչյուր գրքով, բժախնդրորեն ստուգում չնչին կասկածի տեղիք տվող բառն անգամ: Արդյունքում մասնագետները հնարավորություն են ունենում հիանալու գիտական բարձր մակարդակով կատարած հերթական աշխատանքով:

Մեծ գնահատանքի է արժանի Քնարիկ Տեր-Դավթյանի նպատա-

կային գործունեությունը՝ հայ մշակույթի գրական հուշարձանները ներկայացնել ռուս ընթերցողին: Նա ռուսերեն է թարգմանել Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը», Թովմա Մեծոփեցու «Հիշատակարանը», Սեբաստիայի Ս. Նշան եկեղեցու 1809-1829 թթ. ավագերեց Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» գործը, Կարապետ Գաբիկյանի «Եղեռնապատում Փոքրոն Հայոց եւ Նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ» գիրքը: Վերջինիս թարգմանության ժամանակ հայրենասեր գիտնականը չէր կարողանում թաքցնել մարդկային ցավն ու տառապանքը դժոխային ձանապարհ անցած հայ ժողովրդի զավակների հանդեպ՝ նշելով, որ կոտորածների ու գաղթի ահասարսուռ պատկերներն ազդում են իր վրա և դանդաղեցնում աշխատանքների ընթացքը:

Իր գիտական վաստակի համար Քնարիկ Տեր-Դավթյանը պարգևատրվել է պատվոգրերով և մեդալներով: 2015 թ. պարգևատրվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները համակարգող Համառուսաստանյան հանձնաժողովի մեդալով, 2016 թ.՝ Մաշտոցի անվան Մատենադարանի «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով, 2016 թ.՝ Գրականության ինստիտուտի «Մանուկ Աբեղյան» մեդալով, Հայաստանի Պաշտպանության նախարարության հուշամեդալով, ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով, «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով, ՀՀ ԿԳ նախարարության պետական կոմիտեի պատվոգրով:

Քնարիկ Տեր-Դավթյանն ազնիվ, մարդկային մեծ արժանիքներով օժտված անձնավորություն է: Ուրախանում է աշխատակիցների ձեռքբերումներով, կիսում տխրությունը, ոգևորվում երիտասարդ գիտնականների հաջողություններով, խթանում նրանց գիտական հետաքրքրությունները, զանազան խորհուրդներ տալիս:

Քնարիկ Տեր-Դավթյանին մաղթում ենք քաջառողջություն, հոգու արիություն՝ շարունակելու իր հետազոտական աշխատանքները, նաև իրականացնելու վաստակաշատ գիտնական Սեն Արևշատյանի անավարտ մնացած գործերի հրատարակությունները:

**Հերիքնազ Որսկանյան**